ՀԿ(Բ)Կ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ (1946—1948)

ՆՈՐԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Սովետական Հայաստանի գոյության առաջին օրերից սկսած Հայաստանի Կոմկուսը և կառավարությունը եռանդուն գործունեություն են ծավալել հայրենիք—սփյուռք կապերի ամրապնդման և սփյուռքահայերի հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ։ Նրանց ջանքերի շնորհիվ 1921—1936 թթ. հնարավոր դարձավ իրականացնել մոտ 42.286 սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան[1]։ Հետպատերազմյան շրջանում ՍՍՀՄ Ժողկոմսովետը, հաշվի առնելով բազմաթիվ սփյուռքահայերի հայրենիքում բնակություն հաստատելու բուռն ցանկությունը և Սովետական Հայաստանի դեկավար մարմինների միջնորդությունը, 1945 թ. նոյեմբերի 21-ին որոշում ընդունեց սփյուռքահայերի նոր, զանգվածային հայրենադարձություն կազմակերպելու մասին[2]։ 1946—1948 թթ. կայացած այդ հայրենադարձությունը ընդունված է անվանել Մեծ հայրենադարձություն։

Հայրենադարձների ընդունումը և տեղավորումը կազմակերպված անցկացնելու նպատակով ՍՍՀՄ կառավարությունը 1946 թ. մարտին հաստատեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր «Ներգաղթ կոմիտեի»[3] և «Վերաբնակեցման վարչության»[4] ստեղծման մասին ՀՍՍՀ կառավարության որոշումները։ Այդ կազմակերպություններից առաջինը հիմնականում զբաղվելու էր հայրենադարձներին ընդունելու և տեղավորելու, իսկ երկրորդը՝ նրանց համար բնակարաններ կառուցելու և աշխատանքով ապահովելու գործով[5]։ Սփյուռքում ներգաղթ կազմակերպելու համար ստեղծվեցին օժանդակ կոմիտեներ։ Հայրենադարձության կազմակերպման աշխատանքներին լծվեցին ինչպես Հայաստանի կուսակցական, սովետական ու հասարակական կազմակերպություններն ու մարմինները, այնպես էլ սփյուռքի առաջադիմական կազմակերպությունները։ 1946—1948 թթ. հայրենադարձության նախապատրաստական, ինչպես նաև հայրենադարձների ընդունման և տեղավորման աշխատանքները ՀԿ(բ)Կ Կենտկոմը և ՀՍՍՀ Մինիստրների խորհուրդը կազմակերպում էին, ելնելով ՍՍՀՄ կառավարության 1945 թ. նոյեմբերի 21-ի, 1946 թ. հունիսի 21-ի[6], այդ կապակցությամբ ընդունած որոշումներից։ Համաձայն ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1946 թ. փետրվարյան պլենումի որոշման, այդ թվականին Սովետական Հայաստանը պետք է ընդուներ 28.800 մարդ[7], 1947 թ. փետրվարի 27-ի որոշմամբ՝ 1947 թ.՝

---

1 Հ. Ու. Մելիքսետյան, Արևմտահայերի բռնագաղթը և սփյուռքահայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան, Երևան, 1975, էջ 270։

2 «Սովետական Հայաստան», 2. XII. 1945։

3 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 2, էջ 62—63։

4 «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, № 1, էջ 154։

5 ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 362, ց. 2, գ. 20, թ. 1—3, «Սովետական Հայաստան», 9. XII. 1945։

6 «Սովետական Հայաստան», 12. VII. 1946։

7 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի կուսակցական արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 1, ց. 35, գ. 1, թ. 113—114։

63 հազար մարդ[8], իսկ 1947 թ. դեկտեմբերի 23-ի որոշմամբ՝ 1948 թ.՝ 10 հազար մարդ[9]։ 1946 թ. նախատեսվում էր հայրենադարձություն կազմակերպել Լիբանանից, Սիրիայից, Հունաստանից, Իրանից, Բուլղարիայից և Ռումինիայից[10]։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սփյուռքահայ գաղթօջախներում հայրենիք վերադարձողների ցուցակագրումը մեծ ծավալ է ստացել և զգալի թվով հայեր պատրաստ են մեկնելու հայրենիք, համաձայն «Ներգաղթ կոմիտեի» նախագահ Բ. Ա. Աստվածատրյանի զեկուցագրի, 1946 թ. մայիսի 8-ին որոշում ընդունվեց հայրենադարձների ընդունման պլանն ավելացնելու մասին[11]։

Մեծ հայրենադարձությունը սկսվեց 1946 թ. հուլիսի 27-ին, երբ «Տրանսիլվանիա» նավով Բեյրութից Բաթում եկան 1816 սիրիահայեր ու լիբանանահայեր[12]։ Այնուհետև Սիրիայից, Լիբանանից, Հունաստանից, Իրանից, Ռումինիայից և Բուլղարիայից առանձին քարավաններով մինչև աշուն հայրենիք եկան մոտ 10801 ընտանիք (50945 մարդ), այդ թվում՝ Իրանից՝ 3870 ընտանիք (20597 մարդ), Սիրիայից և Լիբանանից՝ 3794 ընտանիք (19253 մարդ), Բուլղարիայից՝ 1248 ընտանիք (4383 մարդ), Հունաստանից՝ 1372 ընտանիք (4974 մարդ), Ռումինիայից՝ 517 ընտանիք (1738 մարդ)[13]։ Քանի որ 1946 թ. նախատեսվածից կրկնակի անգամ շատ հայրենադարձներ ընդունվեցին, նրանց բնակարանով, աշխատանքով ապահովելու հարցում որոշ դժվարություններ առաջացան։ Այդ իսկ պատճառով 1947 թ. հայրենադարձության պլանը կրճատվեց։ Դա հետևանք էր նաև այն բանի, որ Իրանի կառավարությունը 1947 թ. արգելեց իրանահայերի արտագաղթը Սովետական Հայաստան[14]։

1947 թ. հայրենադարձություն էր նախատեսվում նաև ԱՄՆ-ից, Եգիպտոսից ու Ֆրանսիայից, իսկ Ռումինիայից և Բուլղարիայից հայրենադարձությունը հետաձգվեց մինչև 1948 թ.։ 1947 թ. հայրենադարձության ժամանակ հարկ եղավ առնչվել մի շարք դժվարությունների հետ։ Զգալի դժվարություններ առաջացան ֆրանսահայերի հայրենադարձության հարցում, քանի որ ֆրանսիական կառավարությունը երկրի հայ քաղաքացիներին և Ֆրանսիայում ծնված նրանց երեխաներին արգելում էր մեկնել հայրենիք։ Մեծ դժվարություններով, ՍՍՀՄ դեսպանության միջնորդությամբ միայն, թույլատրվեց ֆրանսահայերի արտագաղթը[15]։ Որոշ դժվարություններ առաջացան նաև ԱՄՆ-ում, ուր տեղի իշխանությունները և դաշնակցականները ամեն կերպ ցանկանում էին խոչընդոտել արտագաղթը[16]։ Այդ իսկ պատճառով 1947 թ. ԱՄՆ-ից հնարավոր եղավ ընդունել միայն մեկ խումբ[17]։ Եգիպտոսում հայրենադարձության կազմակերպումը դժվարանում էր խոլերայի պատճառով։ Այնտեղից 1947 թ. հաջողվեց մեկնել միայն «Ա» քարավանին, իսկ «Բ» քարավանի մեկնումը հետաձգվեց մինչև 1948 թ.[18]։ Ներգաղթի կազմակերպումը հաջողությամբ էր ընթանում Հունաստանում, Սիրիայում և Լիբանանում[19]։ Պաղեստինահայերը և իրաքահայերը ներգաղթում էին լիբանանահայերի հետ։ 1947 թ. հոկտեմբերի 30-ի դրու-

---

8 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 20, թ. 26, 35—38։

9 Նույն տեղում, թ. 9—14։

10 Մկի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 35, գ. 1, թ. 113—114, գ. 2, թ. 244—249։

11 Նույն տեղում, գ. 31, թ. 39—40, թ. 205—206։

12 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 4, թ. 82։

13 Նույն տեղում, գ. 20, թ. 25—34, ց. 1, գ. 14, թ. 27—32, Մկի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 35, գ. 4, թ. 43—45։

14 «Զարթոնք», 14. IX. 1947։

15 «Սովետական Հայաստան», 1948, № 2, էջ 43—44։

16 Նույն տեղում, № 1, էջ 22—24։

17 «Էջմիածին», 1947, նոյեմբեր—դեկտեմբեր, էջ 33—34։

18 «Սովետական Հայաստան», 1948, № 9, էջ 38—40։

19 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 18, թ. 1—2։

թյամբ 1947 թ. ներգաղթել էին 25.284 մարդ[20]։ Համաձայն «Զարթոնք» թերթի տվյալների, մինչև 1947 թ. նոյեմբերի կեսերը Սովետական Հայաստան էին եկել 26.865 հայրենադարձներ։ Ահա այդ տվյալները[21]։

Աղյուսակ 1

Ամսաթիվ	Ո՞ր երկրից	Քանի՞ հոգի
հուլիսի 4-ին	Լիբանան	2321
հուլիսի 25-ին	Լիբանան և Սիրիա	3108
օգոստոսի 2-ին	Հունաստան	1947
օգոստոսի 11-ին	Լիբանան և Սիրիա	3154
օգոստոսի 17-ին	Հունաստան	2540
սեպտեմբերի 6-ին	Եգիպտոս	1680
սեպտեմբերի 6-ին	Լիբանան և Սիրիա	2606
սեպտեմբերի 6-ին	Ֆրանսիա	3200
սեպտեմբերի 6-ին	Հունաստան	2245
հոկտեմբերի 25-ին	Իրաք	857
հոկտեմբերի 25-ին	Պաղեստին	1304
հոկտեմբերի 25-ին	Լիբանան և Սիրիա	1750
նոյեմբերի 3-ին	ԱՄՆ	153
	ընդամենը	26,865

Նույն թերթի տվյալներով 1947 թ. հայրենադարձվեց 32.365 մարդ[22], իսկ ըստ ամերիկահայ «Լրաբեր» թերթի տվյալների՝ 34.549 մարդ[23]։

Ինչպես նշվեց, 1948 թ. նախատեսված էր 10 հազար սփյուռքահայեր ընդունել Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Ֆրանսիայից, Ռումինիայից, Բուլղարիայից և ԱՄՆ-ից[24]։ Սակայն միջազգային դրության վատթարացման պատճառով 1948 թ. ներգաղթի պլանը կրճատվեց և, միաժամանակ, որոշվեց 1949 թ. դադարեցնել մասսայական հայրենադարձությունը[25]։ Փաստորեն, եթե չհաշվենք 1947 թ. ռումինահայերի (1022 մարդ) և եգիպտահայերի (2020 մարդ) հետաձգված քարավանները (որոնք վերադարձան՝ առաջինը 1948 թ. հուլիսին, իսկ երկրորդը՝ օգոստոսին)[26], ապա, կարելի է ասել, որ 1948 թ. զանգվածային հայրենադարձություն չի եղել։ Բացառություն է կազմում ամերիկահայերի երկրորդ խումբը (152 մարդ), որը Հայաստան հասավ 1949 թ. փետրվարին[27]։

Առանձին երկրներից դիմողներին «Ներգաղթ կոմիտեն» խորհուրդ էր տալիս հայրենադարձվել այն հարևան երկրներից, որտեղ ստեղծվել էին ներգաղթի օժանդակ կոմիտեներ։ Օրինակ՝ Հարավսլավիայում ապրող հայերը հայրենադարձվելու էին բուլղարահայերի հետ[28]։ Հայրենադարձություն կազմակերպվեց նաև Չինաստանից և այլ երկրներից։ Չինահայերը եկան երկու խմբով (16-ական հոգի)[29]։ 1946—1948 թթ. զանգվածային հայրենադարձությամբ հայրե-

20 Մլի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 36, գ. 30, թ. 260—261։
21 «Զարթոնք», 16. XI. 1947։
22 Նույն տեղում։
23 «Լրաբեր», 28. VIII. 1948։
24 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 20, թ. 9—14։
25 Մլի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 37, գ. 23, թ. 137—138։
26 Մլի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 37,գ. 402, թ. 42—43, «Զարթոնք», 1. VII. 1947։
27 «Սովետական Հայաստան», 1949, № 3, էջ 39—40։
28 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 15, թ. 55։
29 Նույն տեղում, գ. 25, թ. 53։

նիք եկան 19322 ընտանիք (87026 մարդ), որոնց տեղաբաշխման և աշխատանքի տեղավորման մասին վկայում են երկրորդ աղյուսակի տվյալները[30]։

Միաժամանակ տարբեր երկրներից, հատուկ թույլտվությամբ, առանձին խմբերով կամ ընտանիքներով գալիս էին նաև արվեստի ու գիտության դործիչներ և այլ բնագավառների աշխատողներ, սովորողներ։ Ընդհանուր առմամբ 1946—1948 թթ. Մեծ հայրենադարձի ժամանակ Հայաստան եկան 20210 ընտանիք (89.415 մարդ)[31]։ Հարկ է նշել, որ 1946—1948 թթ. ներգաղթածներից 25 հոգի արտասահմանյան տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների ղեկավար աշխատողներ էին (այդ թվում՝ Ֆրանսիայից՝ 9 մարդ, Բուլղարիայից՝ 6 մարդ, Լիբանանից՝ 4 մարդ, Հունաստանից՝ 3 մարդ, Սիրիայից. ԱՄՆ-ից և Պաղեստինից՝ 1-ական մարդ)[32], իսկ 59 հոգի՝ ժողտնտեսության, գիտության և մշակույթի բնագավառների գործիչներ ու աշխատողներ (այդ թվում՝ Ֆրանսիայից՝ 14 մարդ, Սիրիայից և Լիբանանից՝ 11 մարդ, Եգիպտոսից՝ 9 մարդ, Հունաստանից՝ 9 մարդ, Բուլղարիայից և ԱՄՆ-ից՝ 5-ական մարդ, Իրանից՝ 3 մարդ, Ռումինիայից՝ 2 մարդ, Իրաքից՝ 1 մարդ)[33]։

Ամենուր հայրենադարձները հանդիպում էին տեղական բնակչության ջերմ ընդունելությանը և ուշադրությանը։ Հանրապետության բնակչությունը նրանց համար առանձնացնում էր բնակելի սենյակներ, հացահատիկ և այլն։ Հայրենադարձներն ունեին մի շարք արտոնություններ։ 1946 թ. հուլիսի 9-ի ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ գյուղատնտեսության մեջ աշխատող հայրենադարձներին տրված հարկային արտոնությունները[34] 1947 թ. տարածվեցին նաև մյուս բնագավառներում աշխատողների վրա։ Նրանք երկու տարով ազատվեցին եկամտի, անգավակության և այլ հարկերից[35]։ Վերոհիշյալ որոշմամբ արդեն ղգալի թվով ներգաղթածներ ստացել էին հողամասեր և փոխառություն՝ անհատական տներ կառուցելու և օժանդակ տնտեսություն ստեղծելու համար[36]։ Հանրապետության գյուղմինիստրությունը և շրջսովետների գործկոմները պարտավորեցվեցին կոլտնտեսային հողային ընդհանուր ֆոնդից գյուղական վայրերում բնակվող հայրենադարձներին ապահովել հողով[37]։ Հայրենադարձների համար նոր ավաններ կառուցելու նպատակով շատ կոլտնտեսություններ իրենց հողային տարածություններից առանձնացնում էին հողամասեր[38]։

Հայրենադարձների տեղավորման աշխատանքները փաստորեն սկսվում էին ընդունման կետերից։ Հայրենադարձներին տեղավորում էին հարմարավետ հյուրանոցներում և ապահովում սննդով։ Այնուհետև ճշտում էին նրանց մասնագիտությունը, նախկին բնակավայրի կլիմայական պայմանները, և, հաշվի առնելով նաև նրանց ցանկությունները, ուղարկում էին հանրապետության քաղաքներն ու գյուղերը՝ հիմնական բնակության։ Հայրենադարձները հիմնականում տեղավորվում էին նոր կառուցված կամ առանձնացված ու հարմարեցված բնակարաններում և սենյակներում։ Լայն ծավալ ստացավ անհատական տների կառուցումը։ Այդ մասին են վկայում 1948 թ. նոյեմբերի 12-14-ը կայացած ՀԿ(բ)Կ XIV համագումարում ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանի հաշվետու զեկուցման մեջ բերված տվյալները. «Կառավարությունը ներգաղթածներին հնարավորություն է տվել կառուցելու անհատա-

---

30 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 37, գ. 353, թ. 24, 26 (Լենինականին և Երևանին վերաբերող տվյալները մոտավոր են, քանի որ Երևանի և Լենինականի քաղսովետները, հայրենադարձների տեղափոխության հետ կապված, դժվարությամբ են անցկացրել հաշվառումը)։

31 ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 37, գ. 353, թ. 24, 25, 26։

32 Նույն տեղում։

33 Նույն տեղում, թ. 28։

34 «Սովետական Հայաստան», 12. VII. 1946։

35 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 2, գ. 20, թ. 25—34։

36 «Սովետական Հայաստան», 12. VII. 1946։

37 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 362, ց. 1, գ. 31, թ. 29—32։

38 Նույն տեղում, գ. 25, թ. 83, 96, 97։

Աղյուսակ 2

Քաղաքների և շրջանների անվանումը	Լինտանիքների քանակը	Շնչերի քանակը	Աշխատունակների քանակը	Աշխատողների քանակը	Գործազուրկների քանակը	Ինչպիսի տներում են ապրում				Կառուցվում են անհատական տներ
						գերբնակեցված	հարմարավետ	մասնավոր	անհատական	
1. Երևան	7333	34269	12255	11838	387	2441	327	2334	2231	2131
2. Լենինական	1907	8883	3939	3757	182	946	250	627	87	340
3. Կիրովական	823	3529	1634	1528	156	228	266	251	78	67
4. Էջմիածնի	1023	4086	1895	1872	23	785	39	199	—	—
5. Արտաշատի	869	4011	2291	2274	17	199	3	371	296	—
6. Շահումյանի	935	3785	1666	1617	49	145	182	221	387	—
7. Վեդու (Արարատի)	714	2930	1358	1351	7	405	122	138	49	5
8. Կոտայքի (Աբովյանի)	431	2087	862	858	4	127	12	228	64	—
9. Աշտարակի	397	1855	822	819	3	75	—	271	51	—
10. Հոկտեմբերյանի	847	3467	1624	1619	5	518	—	99	230	99
11. Թալինի	377	1962	665	665	—	14	22	307	34	—
12. Սիսիանի	353	1781	961	961	—	3	—	306	44	17
13. Գորիսի	360	1814	881	881	—	24	21	315	—	50
14. Ալավերդու	262	1081	584	524	—	65	46	151	—	—
15. Ղափանի	248	1073	502	489	13	62	130	31	25	—
16. Ախտալի (Հրազդանի)	240	842	398	394	4	31	91	89	29	—
17. Արթիկի	198	846	316	310	6	11	104	79	4	—
18. Զանգիբասարի (Մասիսի)	179	754	423	416	7	—	7	162	10	—
19. Ախուրյանի	175	767	381	377	4	23	—	142	10	—
20. Ստեփանավանի	286	1138	526	522	4	4	56	222	4	—
21. Նոյեմբերյանի	155	740	426	426	—	73	—	74	8	—
22. Նոր Բայազետի (Կամոյի)	153	642	287	286	1	33	1	108	11	—
23. Դիլիջանի	142	649	298	246	52	130	3	9	—	32
24. Շամշադինի	138	545	247	245	2	38	11	72	17	—
25. Կալինինոյի	106	486	134	125	9	33	30	34	9	—
26. Միկոյանի (Եղեգնաձորի)	97	584	273	273	—	—	7	90	—	—
27. Սևանի	85	306	161	154	7	80	—	5	—	—
28. Սպիտակի	79	294	172	163	9	44	—	32	3	—
29. Բասարգեչարի (Վարդենիսի)	74	303	141	136	5	21	—	53	—	—
30. Իջևանի	63	288	126	126	—	3	—	60	—	—
31. Մեղրու	42	215	94	94	—	—	—	39	3	—
32. Աղջնի (Անիի)	37	185	88	88	—	—	—	37	—	—
33. Կարաբախլարի (Արարատի)	27	128	61	61	—	—	—	27	—	—
34. Մարտունու	15	73	29	29	—	—	—	15	—	—
35. Ապաքանի	13	65	36	36	—	—	—	13	—	—
36. Ազիզբեկովի	11	48	23	23	—	—	8	3	—	—
37. Ալագյազի (Արագածի)	9	43	14	14	—	—	—	9	—	—
38. Ղուկասյանի	2	3	3	3	—	—	—	2	—	—
39. Կրասնոսելսկի	117	469	226	226	—	—	—	117	—	—
Ընդամենը	19322	87026	36822	35827	956	6561	1738	7342	3684	2741

կան տներ՝ տրամադրելով նրանց երկարատև վարկ և շինանյութ։ Նոր տների կառուցման համար արդեն ծախսվել է 274 միլ. ռուբլի։

Ներգաղթածները, ձեռնարկություններն ու կոլխոզները արդեն կառուցել են 4.650 տուն։ Բացի դրանից, միներստրություններն ու ձեռնարկությունները կառուցել են 3.700 սենյակ։ Շինարարության պրոցեսում են գտնվում մոտավորապես 6.500 տուն և 2.500 սենյակ։

Ներգաղթածների համար կառուցվում է 8 նոր ավան։ Յոթ ավաններում ներգաղթածներն արդեն ապրում են»[39]։ Հանրագումարի բերելով սփյուռքահայերի 1946—1948 թթ. հայրենադարձության և հայրենադարձների տեղավորման արդյունքները, զեկուցողը միաժամանակ նշեց, որ արտասահմանյան հայերի հայրենադարձությունը թույլատրելու վերաբերյալ ՍՍՀՄ կառավարության որոշումից հետո Սովետական Հայաստան էին վերադարձել մոտ 90 հազար մարդ, որոնց մեջ աշխատունակները կազմում էին մոտ 37 հազար մարդ և որ բոլոր հայրենադարձների 42 տոկոսը տեղավորված էր հանրապետության մայրաքաղաքում՝ Երևանում։ «Ներկայումս,— ասաց նա,— արդյունաբերական ձեռնարկություններում աշխատում են մոտ 9.000 մարդ, արհեստագործական կոոպերացիայի սիստեմում՝ 11 հազար մարդ, շինարարություններում՝ 3.150 մարդ և զանազան հասարակական կազմակերպություններում ու այլ հիմնարկներում՝ 4.700 մարդ»[40]։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը հայրենադարձներին աշխատանքով, բնակարանով և հողամասերով ապահովելուն զուգահեռ, միաժամանակ հաճախակի անդրադառնում էր նրանց կենցաղային պայմանների բարելավման, կրթության, կոմունիստական դաստիարակության և սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու հարցերին։ Հայրենադարձները եկել էին տարբեր սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման մակարդակի վրա գտնվող երկրներից և պետք էր նրանց օգնել՝ տեղի պայմաններին հարմարվելու համար[41]։ 1946 թ. ներգաղթած հայերի նյութական-կենցաղային պայմաններին ծանոթանալու նպատակով 1947 թ. գարնանը և ամռանը կազմակերպվեցին համապատասխան ստուգումներ[42], որոնց միջոցով բացահայտվեցին հայրենադարձների տեղավորման աշխատանքներում տեղ գտած առանձին բացերը և դրանց վերացման ուղղությամբ մշակվեցին համապատասխան միջոցառումներ։ 1946 թ. հոկտեմբերի 2-ին լսվեց հայրենադարձներին ցույց տրվող օգնության հարցը։ Որոշվեց ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին թույլատրել հայրենադարձներին ցույց տրվող օգնության ֆոնդից 2 մլն. ռ. հատկացնել կարիքավոր հայրենադարձներին[43]։ 1947 թ. փետրվարի 12-ին լսվեց Լենինականում և Երևանում բնակություն հաստատած հայրենադարձներին աշխատանքով ապահովելու հարցը։ Երևանի և Լենինականի քաղկոմներին ու քաղսովետներին ցուցում տրվեց երեք օրվա ընթացքում աշխատանքի տեղավորել չաշխատող հայրենադարձներին։ Միաժամանակ «Վերաբնակեցման վարչությանը» և «Ներգաղթ կոմիտեին» հանձնարարվեց ժամանակին անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել հայրենադարձների աշխատանքային և կենցաղային պայմանները է՛լ ավելի բարելավելու համար[44]։ 1947 թ. ամռանը կադրային վարչությունը ներկայացրեց հայրենադարձների տեղավորման մասին զեկուցագիր, որի հիման վրա ընդունվեց համապատասխան որոշում։ Այդ որոշմամբ համապատասխան կազմակերպությունները պարտավորեցվում էին. ա) մեկ ամսում ստուգել հայրենադարձների նյութակենցաղային պայմանները և վերացնել թերությունները, բ) հաշվի առնել չաշխատող հայրենադարձների մասնագիտությունը և ըստ այդմ

---

39 «Հաշվետու զեկուցում Հայաստանի Կ(բ)Կ XIV համագումարում ՀԿ(բ)Կ Կենտկոմի աշխատանքների մասին», Երևան, 1948, էջ 107—109։

40 Նույն տեղում։

41 ՄԼի ՀՄԿԱ, ֆ. 1, ց. 36, գ. 30, թ. 238—252։

42 Նույն տեղում, գ. 17, թ. 83—85։

43 Նույն տեղում, ց. 35, գ. 21, թ. 95։

44 Նույն տեղում, ց. 36, գ. 10, թ. 157։

մեկ ամսում նրանց տեղավորել աշխատանքի, գ) հանրապետության թերթերի խմբագրություններին և ՀԼԿԵՄ Կենտկոմին պարտավորեցնել միջոցառումներ մշակել հայրենադարձների շրջանում կուլտուրական, տնտեսական և քաղաքական-լուսավորական լուրջ աշխատանքներ կատարելու համար, դ) Կենտկոմի ագիտացիայի և պրոպագանդայի բաժնին հանձնարարվում էր պրոպագանդիստներ ուղարկել շրջանները[45]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը հետևում էր ընդունված որոշումների կատարմանը։ Որոշումների կատարման արդյունքների մասին 1947 թ. հուլիսին զեկուցում են ՀԿ(բ)Կ Լենինականի քաղկոմի, Ախուրյանի և Հոկտեմբերյանի շրջկոմների քարտուղարները[46]։

Որոշ մասնագիտությունների գծով հանրապետությունում աշխատանքի տեղ չլինելու պատճառով ՀՍՍՀ պետպլանը և «Վերաբնակեցման վարչությունը» պարտավորեցվեցին երկու շաբաթվա ընթացքում ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի հաստատմանը ներկայացնել արդյունաբերական որոշակի ճյուղերի գծով արտադրության ընդլայնման նախագիծ։ Միաժամանակ հարց էր դրվում թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության մեջ անցկացնել որոշակի մասնագիտությունների գծով վերատրակավորում։ ՀՍՍՀ լուսավորության մինիստրությունը պարտավորեցվեց հայրենադարձ երեխաներին ընդգրկել դպրոցները և նրանց ապահովել գրենական պիտույքներով։ Առողջապահության մինիստրությանը հանձնարարվեց է՛լ ավելի բարելավել հայրենադարձների բուժսպասարկումը[47]։

1948 թ. նոյեմբերի 24-ին կարիքավոր հայրենադարձներին օգնելու մասին համապատասխան որոշում ընդունվեց[48]։ Մի շարք որոշումներ ընդունվեցին նաև հայրենադարձների շրջանում կրթության և քաղաքական-լուսավորական աշխատանքների դրվածքի բարելավման ուղղությամբ, քանի որ նրանց սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու հարցը շատ բանով առնչվում էր կրթության և կոմունիստական դաստիարակության խնդիրների բարեհաջող իրականացման հետ։ 1946 թ. նոյեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմը քաղկոմներին և շրջկոմներին պարտավորեցրեց տեղերում բարձր մակարդակով կազմակերպել հայրենադարձների անգրագիտությունը և կիսագրագիտությունը վերացնելու աշխատանքները, բացել արտադրությունից չկտրված երեկոյան ուսուցում և խմբակներ։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի, քաղկոմների և շրջկոմների ջանքերի ու ամենօրյա հոգատարության շնորհիվ հաջողությամբ էր ընթանում հայրենադարձների կրթության և կոմունիստական դաստիարակության գործը, որը բարենպաստ պայմաններ ստեղծեց սոցիալիստական շինարարության մեջ նրանց ներգրավման համար։ Այդ կարևոր խնդիրը լուծելու նպատակով 1948 թ. նոյեմբերին ՀԿ(բ)Կ XIV համագումարը կուսակցական կազմակերպություններին պարտավորեցրեց ուժեղացնել ուշադրությունը արտասահմանից հայրենիք վերադարձած հայերի կարիքների նկատմամբ, միջոցներ ձեռք առնել նրանց աշխատանքը ճիշտ օգտագործելու, որակավորումը բարձրացնելու և նրանց կողմից նոր մասնագիտություններ յուրացնելու ասպարեզում[49]։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի մշակած և կիրառած միջոցառումների շնորհիվ հայրենադարձներն արագորեն ներգրավվեցին սոցիալիստական շինարարության մեջ այն հշմարիտ գիտակցությամբ, որ հայ ժողովրդի ապագան կերտվում է Սովետական Հայաստանում, ՍՍՀՄ եղբայրական բոլոր ժողովուրդների աջակցությամբ և ՍՄԿԿ-ի ղեկավարությամբ։

---

45 Նույն տեղում, գ. 17, թ. 83—85։

46 Նույն տեղում։

47 Նույն տեղում, թ. 144—147։

48 Նույն տեղում, ց. 37, գ. 23, թ. 216։

49 «Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության XIV համագումարի բանաձևը ՀԿ(բ)Կ Կենտկոմի աշխատանքի մասին», Երևան, 1948, էջ 25։

ДЕЯТЕЛЬНОСТЬ КОМПАРТИИ АРМЕНИИ ПО ОРГАНИЗАЦИИ РЕПАТРИАЦИИ ЗАРУБЕЖНЫХ АРМЯН И ВОВЛЕЧЕНИЮ ИХ В СОЦИАЛИСТИЧЕСКОЕ СТРОИТЕЛЬСТВО (1946—1948)

НОРИК САРГСЯН

Резюме

В 1946-1948 гг. Коммунистическая партия Армении и правительство республики провели большую работу по приему и размещению репатриантов.

В 1946—1948 гг. в Советскую Армению репатриировало из зарубежных стран приблизительно 90 тыс. армян. Одновременно на основании постановлений ЦК КП Армении и под его непосредственным руководством в указанные годы был осуществлен целый комплекс мероприятий по улучшению материально-бытовых условий репатриантов, ликвидации их неграмотности и полуграмотности, по организации политико-воспитательной работы среди них и обеспечению активного участия репатриантов в социалистическом строительстве республики.